ՍՓՅՈՒՌՔՈՒՄ

ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԻ ՀԱՅՈՑ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԹԵՄԻ ԹԵՄԱԿԱՆ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԸ ԵՎ ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆԱՑ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ

Ապրիլի 29—30-ին, Բոստոնի հայոց Ս. Երրորդություն եկեղեցու մշակութային սրահում, կայացել է Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգների հայոց Արևելյան թեմի 59-րդ տարեկան թեմական-պատգամավորական ժողովը, նախագահությամբ առաջնորդ գերաշնորհ Տ. Սիոն արքեպիսկոպոս Մանուկյանի և ատենապետությամբ արժանապատիվ Տ. Բարգեն քահանա Մագսուտյանի։

Ժողովին մասնակցել է 117 հոգի։

Ժողովը բացվել է առաջնորդ սրբազան հոր աղոթքով, որից հետո հոտնկայս ընթերցվել է Վեհափառ Հայրապետի ապրիլ 25 թվակիր ողջույնի հետևյալ հեռագիրը, ուղղված թեմական-պատգամավորական ժողովին.

«Ս. Էջմիածնեն սրտագին ողջույն թեմական-պատգամավորական ժողովին նախագահության և բոլոր պատգամավորներուն։ Աստուծո օրհնությունը բող ձեզի հետ ըլլա և Ս. Հոգին ձեզ առաջնորդե Քրիստոսի սիրո և խաղաղության ոգիով։

Մեծ գոհունակությամբ ծանոթացանք ժողովիդ օրակարգին և կարգացույցին։ Ուրախ ենք, որ ժողովը տեղի կունենա հոգևոր պաշտամունքի մթնոլորտի մեջ, Բոստոնի նորակառույց փառավոր եկեղեցվո հովանիին ներքև։

Աստվածասե՛ր պատգամավորներ, սիրեցյա՛լ զավակներ Մեր, ձեզի ամենուդ շինարար ոգի, լավատես եռանդ և անսասան հավատք, և հաջողություն ձեր ձեռաց գործերուն, ձեր սուրբ գործերուն. հաջողություն մանավանդ ձեր մեծ ծրագրին՝ Մայր Տաճարիդ շինության գործին, սեպուն պարտքը ձեր Աստուծո և Ազգին հանդեպ։

Մնամք միշտ աղոթող ձեր եկեղեցիներու պայծառության, հոգևոր կյանքի շինության համար, համայն հայ հավատացյալ ժողովուրդի արևշատության և երջանկության համար, և ձեր հյուրընկալ մեծ երկրի՝ Միացյալ Նահանգաց ամերիկյան ժողովուրդի բարության և խաղաղության համար։

Կեցցե՛ Հայաստանյայց Ս. Եկեղեցին։

Կեցցե՛ ամերիկահայ քրիստոսասեր մեր ժողովուրդը»։

Ապա ընտրվում են մնայուն դիվան և զանազան հանձնաժողովներ։

Այնուհետև ժողովի առաջին նիստում ընդարձակ և բովանդակալից զեկուցումով հանդես է գալիս առաջնորդ սրբազան հայրը, ծանրանալով թեմական խորհրդի հոգևոր, կրթական, մշակութային և վարչական 16-ամսյա գործունեության վրա։ Թեմական խորհրդի 16-ամսյա արդյունավետ գործունեության առթիվ, թեմական-պատգամավորական ժողովը հայտնում է իր միաձայն գոհունակությունն ու շնորհակալությունը։

Պատգամավորական ժողովի երկրորդ նիստում ընթերցվում են Նյու-Յորքում կառուցվելիք Մայր Տաճարի շինության կենտրոնական հանձնաժողովի և Մշակութային կենտրոնի շինության հանձնաժողովի զեկուցագրերը, որոնք նույնպես ընդունվում են գոհունակությամբ։

Ժողովի երրորդ նիստում քննվում և վավերացվում է թեմի տարեկան ընդհանուր բյուջեն։

Պատգամավորական ժողովը իր սույն նիստում որոշում է Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգներում բանալ հայ աստվածաբանական մի ճեմարան, անգլերենի թարգմանել մեր Մաշտոցը և հրատարակել թեմի «Վիճակացույց և պատմություն» հուշամատյանը։

Պատգամավորական ժողովի չորրորդ և վերջին նիստում ընտրվում են թեմական խորհրդի երկու հոգևորական և երեք աշխարհական նոր անդամներ՝ դադրած անդամների տեղ։

Այնուհետև ժողովում գաղտնի քվեարկությամբ ընտրվում են հաշվեքննիչ հանձնաժողովի, հոգևորականաց հիմնադրամի խնամակալության և կալվածոց ավանդապահ մարմնի անդամները։

Ամերիկայի Միացյալ Նահանգների Արևելյան թեմի պատգամավորական 59-րդ ժողովի միաձայն ընդունած առաջին բանաձևում գրվել է հետևյալը Մայր Աթոռի և թեմի հարաբերությունների մասին.

«Թեմական պատգամավորական ժողովը իր ուրդիական անկեղծ սերն ու հարգանքը կհայտնե Նորին Ս. Օծություն Տ. Տ. Վազգեն Ա. Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին, մանավանդ անցնող տարվան մայիս—հունիս ամիսներու ընթացքին հնամերիկա կատարած Իր օրհնաբեր այցելության համար, որով ավելի ամրապնդվեցավ Ամերիկայի հայության մեջ ոգին, սերն ու պաշտամունքը հանդեպ Ս. Էջմիածնի և անոր արժանրնտիր Գահակալին։ Ժողովս կմաղթե իր սիրելի Հայրապետին առողջ և երկար կյանք ու շուտափույթ հաջողություն հայ ժողովուրդը, ի սփյուռս աշխարհի, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հովանիին ներքև միացնելու ջանքերուն»։

«Առաջնորդ հայրը,— գրվել է այնուհետև ատենագրության մեջ,— հանուն Վեհափառ Հայրապետին, օրհնեց պատգամավորները և հորդորեց ամենքը, որպեսզի շարունակեն իրենց բաժին պարտականությունը սիրով կատարել Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցվո պայծառության և վիճակիս հոգևոր կյանքի, կրթական ու մշակութային ձեռնարկներու հաջողության համար։

Նախագահ սրբազանի «Պահպանիչ»-ով և «Հայր մեր»-ի միաբերան երգեցողությամբ փակվեցավ 59-րդ տարեկան թեմական պատգամավորական ժողովի չորրորդ և վերջին նիստը, կիրակի երեկոյան ժամը 8-ին»։

***

Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգների հայոց Արևելյան թեմի 59-րդ տարեկան թեմական պատգամավորական ժողովի գումարման առթիվ, ապրիլի 27—28-ին կայացել է հոգևորականաց համագումար, նախագահությամբ թեմական առաջնորդ գերաշնորհ Տ. Սիոն արքեպիսկոպոս Մանուկյանի և մասնակցությամբ թեմի ողջ հոգևորականության։

Մայր Աթոռ Ս. Էջմիածնից Վեհափառ Հայրապետը ապրիլ 22-ին հետևյալ հեռագիրը հղեց հոգևորականաց համագումարին.

«Աստվածակառույց Ս. Էջմիածնեն հրեվանքով կողջունեմք թեմիդ հոգևորականաց համագումարը, թեմական պատգամավորական ժողովի առիթով։

Հոգվո մխիթարությամբ ծանոթացանք ծրագրին և օրակարգի դրված հյութերուն, որուն կմասնակցին թեմիդ հրիստոսասեր հոգևոր սպասավորները։ Ինչքա՞ն պիտի ուզեինք անձամբ ներկա ըլլալ և լսել բոլորին, մանավանդ որ այժմ անձամբ կճանչնանք և կգնահատենք զիրենք։

Հեռավոր Հայոց աշխարհեն, Փրկչի Իշման Ս. Սեղանեն, լսեցե՛ք Մեր ուրախության ձայնը և Մեր աղոթքը Ձերդ Սրբազնության, Տիրան և Մամբրե արքեպիսկոպոսներու, Ձեր փոխանորդ հայր սուրբի և թեմիդ բոլոր հոգեշնորհ վարդապետներու և արժանապատիվ քահանա հայրերու քաջառողջության և եկեղեցաշեն գործոց հաջողության համար։

«ՈՉ ԴԱԴԱՐԻՄ Ի ԳՈՀԱՆԱԼՈՅ ՎԱՍՆ ՁԵՐ ՅԻՇԵԼ ՁԶԵՋ ՅԱՂՕԹՍ. ԶԻ ԱՍՏՈՒԱԾ ՏԵԱՌՆ ՄԵՐՈՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ, ՀԱՅՐՆ ՓԱՌԱՑ, ՏԱՑԷ ԶՀՈԳԻՆ ԻՄԱՍՏՈՒԹԵԱՆ ԵՒ ՅԱՅՏՆՈՒԹԵԱՆ ԿԻՏՈՒԹԵԱՄԲՆ ԻՒՐՈՎ» (եփես. Ա 16—17)։

Երկու օր տևող իր երեք նիստերի ընթացքում, հոգևորականաց համագումարը քննարկել է կրոնական, կանոնական, ծիսական, կրթական, բարոյա-դաստիարակչական մի շարք հարցեր և ընդունել համապատասխան որոշումներ։

Համագումարին զուգընթաց կարդացվել են նաև շահեկան դասախոսություններ կրոնադաստիարակչական հարցերի շուրջ։

Համագումարի օրերին, Բոստոնի հայոց Ս. Երրորդություն եկեղեցում, կատարվել է ժամերգություն, իսկ կիրակի, ապրիլի 30-ին, պաշտվել է սուրբ պատարագ, որի ընթացքում քարոզել է առաջնորդ սրբազան հայրը։